


# Արդարադատության դոկտրինալ և օրենսդրական հիմքերի պատմական զարգացման հիմնական ուղենիշները

Ստեփանյան Նորայր Վ.

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և Իրավունքի ինստիտուտի ասպիրանտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0007-6099-0447>

[stepanyan-norayr@mail.ru](mailto:stepanyan-norayr@mail.ru)

ՀՏԳ՝ 34(091); EDN: EQVLNI

DOI: 10.58587/18292437-2024.6-40

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ արդարադատություն, Աստվածաշունչ, Ղուրան, Ավետա, հնդարիական, օրենք, իրավունք

## Основные вехи исторического развития доктринальных и законодательных основ правосудия

Степанян Норайр В.

аспирант Института философии, социологии и права НАН РА (Ереван, РА)

**Аннотация.** Идея правосудия – как требование справедливого и правильного разрешения споров компетентными органами в рамках установленных процедур, возникла в глубине древнейших веков.

Его источники можно найти в “Ригведе”, священных текстах индоарийских народов, “Авесте”, в книге пророчеств и проповедей древнеиранского пророка Заратустры, Библии, Коране, других священных писаниях.

Правосудие ... Что является основанием этого слова? Какие идеи положили люди на этом основании, на котором построен этот правовой институт? Как объединились идеи правосудия и закона в этом термине и положили основу возникновения судебной власти, которая сегодня является оплотом любого правового демократического государства?

Анализируя правовую литературу, можно отметить, что вопрос о государственности, праве и правосудии заботил Аристотеля, Г. В. Ф. Гегеля, Г. Гроция, Э. Канта, Платона, М. Цицерона, Монтескье и других известных мыслителей. В дальнейшем их идеи были отражены в трудах наших современников – С. Алексеева, Д. Иконникова, Д. Керимова, А. Левченкова, В. Нерсисянца, А. Сачкова, В. Смородинскоо, В. Суханцевой и других авторов. Тем не менее, характер правосудия динамичный, правосудие постоянно развивается под воздействием преобразующих процессов, происходящих в обществе и государстве.

Так как правосудие действительно является одним из основных, важных направлений, свойственных государственной деятельности, то многочисленные исследователи в области теории государства и права и истории, отвечая на первый вопрос, обычно соглашаются, что правосудие является ровесником как государства, так и права.

Данное теоретическое заключение обосновывается следующим основаниями:

- Первое, правосудие в принципе невозможно без существования определенной правовой базы, так как именно ее наличие побуждает сторон искать защиту государства, в том числе также в суде, в случае нарушения какого-либо конкретного субъективного права. Действительно, когда нет права, суд также не является необходимым, а если нет суда, нарушается также нормальное функционирование права. В таком случае суд придает живости праву и выступает в качестве “живого права”.

- Второе, предположение, что суд является ровесником права и государства и связанным с ними, достаточно основательно было подтверждено дошедшими до нас историческими памятниками, согласно которым любая правовая система невозможна без суда – института, осуществляющего правосудие, который предусмотрен для восстановления нарушенного права и социальной справедливости.

**Ключевые слова и словосочетания:** правосудие, Библия, Коран, Авеста, индоарийский, закон, право

## Basic Stages of Historical Development of Doctrinal and Legislative Bases of Justice

Stepanyan Norayr V.

postgraduate of Institute of Philosophy, Sociology and Law of National Academy of Sciences of the Republic of Armenia (Yerevan, RA)

**Abstract.** The idea of justice, as a demand for a fair and correct settlement of disputes by competent authorities within the framework of established procedures, arose in ancient times.

Its sources can be found in “Rigveda”, sacred texts of Indian peoples, “Avesta”, in the book of prophecies and sermons of old Iranian prophet Zoroaster, in the Bible, the Quran and other sacred writings.

Justice... What is the base of this word? What ideas did people put on the foundation on which this legal institution was built? How did the ideas of justice and law unite in this term and lay the foundation for the emergence of judiciary, which today is bulwark of any legal democratic state.

Analyzing the legal literature, it could be mentioned that issues regarding the statehood, law and justice concerned Aristotle, G.V.F. Hegel, H. Grotius, E. Kant, Plato, M. Cicero, Montesquieu and other famous thinkers. Later, their ideas were reflected in the works of our modern S. Alexeyev, D. Ikonnikova, D. Kerimov, A. Levchenkov, V. Nersesyants, A. Sachkov, V. Smorodinsk, V. Sokhantseva and other authors. However, the nature of justice is dynamic, justice is constantly developing under the influence of the transformation processes taking place in society and the state.

As justice is really one of the main, important directions typical of state activity, then numerous researchers in the field of state and theory of law and history, answering the first question, usually agreed that justice is equal to both the state and the law.

This theoretical conclusion is based on the following grounds;

- First, justice is fundamentally impossible without the existence of a certain legal basis, because its existence motivates the parties to seek protection in the state, including in the court, in case of violation of any specific subjective right. Indeed, if there is no law, neither the court is required, and if there is no court, then the normal operation of the law is also violated. In this case, the court gives life to the law and stands for “living right”.

- Second, the assumption that the court is considered the equal and adjacent to the law and the state, has been thoroughly confirmed by the historical monuments that have reached us. According to which, any legal system is impossible without a court, an institution of justice, which is envisaged for restoration of violated right and social justice.

**Keywords & phrases:** justice, Bible, Quran, Avesta, Indian languages, law, right

### Նախաբան.

Արդարադատության գաղափարը իբրև սահմանված կարգերի շրջանակներում իրավասու մարմինների կողմից վեճերի ու ճիշտ լուծման պահանջ, առաջացել է խորը հնադարում: Օրինակ, հին Չինաստանում և Հնդկաստանում պնդում էին, որ պետությունը և հասարակությունը պետք է առաջնորդվեն արդարության և արդարադատության գաղափարներով:

Միջնադարում արդարադատության վերաբերյալ գաղափարներն ամրապնդվեցին գրավոր օրենքներում (օրինակ՝ Միխիթար Գոշի դատաստանագրքում, բարբարոսական օրենսգրքերում, կրոնական նորմերում):

Քաղակրթության պատմությունը վկայում է, որ արդարադատության գաղափարը և պրակտիկան միշտ էլ ուղեկցել են և շարունակում են ուղեկցել մարդկությանը:

### Հիմնական բովանդակությունը.

Արդարադատության գաղափարը իբրև սահմանված ընթացակարգերի շրջանակներում իրավասու մարմինների կողմից վեճերի արդար ու ճիշտ լուծման պահանջ, առաջացել է խորը հնադարում:

Դրա աղբյուրները կարելի է գտնել «Ռիգ-վեդայում» հնդարիական ժողովուրդների սրբազան տեքստերում, «Ավեստայում» հին իրանական մարգարե Ջրադաշտի մարգարեությունների ու քարոզների գրքում, Աստվածաշնչում, Դուրանում, սրբազան այլ գրություններում:

Արդարադատություն. Ո՞րն է այս բառի հիմքը: Մարդիկ ի՞նչ գաղափարներ դրեցին այն հիմքի վրա, որի վրա կառուցվել է այս իրավական ինստիտուտը [1]: Արդարադատության և օրենքի գաղափար ներն ինչպե՞ս միավորվեցին այս եզրույթի մեջ և հիմք դրեցին դատական իշխանության առաջացմանը, որն այսօր ցան-

կացած իրավական ժողովրդավարական պետության պատվարն է:

Վերլուծելով իրավական գրականությունը՝ կարելի է նշել, որ պետականության, իրավունքի և արդարադատության վերաբերյալ հարցերը մտահոգել են Արիստոտելին, Գ. Վ. Ֆ. Հեգելին, Հ. Գրոցիոսին, Է. Կանտին, Պլատոնին Մ. Ցիցերոնին, Մոնտեսքյոյին և հայտնի այլ մտածողներին: Հետագայում նրանց գաղափարներն արտացոլվեցին մեր ժամանակակից Ս. Ալեքսեևի, Դ. Իկոննիկովայի, Դ. Քերիմովի, Ա. Լևչենկովի, Վ. Ներսեսյանցի, Ա. Մաչկովի, Վ. Մոնրոզինսկու, Վ. Սուխանցևայի, այլ հեղինակների աշխատություններում: Այնուամենայնիվ, արդարադատության բնույթը դիմամիկ է, արդարադատությունն անընդհատ զարգանում է հասարակության և պետության մեջ տեղի ունեցող վերափոխիչ գործընթացների ազդեցության ներքո: Հետևաբար, այս աշխատանքի համատեքստում առաջարկում ենք վերլուծել արդարադատության և հետևել փիլիսոփայությանը, որի միջոցով տեղի են ունեցել հիմնարար գաղափարներ և տեսակետներ այս իրավական ինստիտուտի ձևավորումը և զարգացումը:

Այսպիսով, դեռ Մ. Ցիցերոնն իր «Պետության մասին» տրակտատում նշում է, որ «*օրենքը, արդարադատությունը, հավատարմությունը, արդարացիությունը... գալիս են այն մարդկանցից, ովքեր հաստատել են մեկը սովորույթներով, իսկ մյուսը՝ օրենքներով*» [13, էջ 30]: Ուստի զարմանալի չէ, որ մեր քաղաքակրթության վրա ազդած և նրա ներկայիս դեմքը ձևավորող հիմնարար գաղափարների շարքում ամենապատվավոր տեղերից մեկը զբաղեցնում է արդարադատության գաղափարը, առանց որի օրինական պետականության զարգացումն անհնար է առանց դրա իրականացման:

Արդիական է նաև Պլատոնի այն գաղափարը, որն արտահայտել է նա «Պետություն», «Քաղաքականություն», «Օրենքներ» և այլ տեղեկագրություններում. «Եթե օրենքը ուժ չունի և գտնվում է ինչ-որ մեկի իրավասության ներքո, պետության մոտապուտ մահն անխուսափելի» [2]:

Նա նշում է, որ արդարության նպատակը ոչ միայն պատիժն է, այլ նաև վիճաբանողների հաշտեցումը: Հույն փիլիսոփան դատարանների նշանակումը հավասարեցնում է կառավարիչների նշանակմանը: Ի վերջո, «յուրաքանչյուր ղեկավար որոշակի դեպքերում գործում է որ պես դատավոր, դատավորը, չլինելով իշխանավոր, այնուամենայնիվ դառնում է այն օրը, երբ նա իր որոշմամբ ավարտում է դատական գործը» [2]:

Պլատոնը շեշտում է, որ արդարադատության իրականացումը յուրաքանչյուրի գործն է, հիմնավորում է ժողովրդական դատարանի սկզբունքը. «Պետական հանցագործություններին առաջադրված մեղադրանքները նախ պետք է հանձնվեն ժողովրդի որոշմանը: Երբ պետությունը վիրավորվում է, բոլոր քաղաքացիները գոհեր են ունենում Ինչ վերաբերում է մասնավոր դեպքերի քննությանը, ապա բոլորը պետք է իրենց հնարավորությունների սահմաններում մասնակցեն դրան: Նա, ով չի օգտագործում արդարադատության ընդհանուր վարչարարության հնարավորությունը, համարվում է, որ նա բացարձակապես կասկածն է պետության հետ» [9, էջ 410]:

Ցիցերոնը օրենքի անփոփոխ հիմքը համարեց մարդկային բնույթին բնորոշ պատճառը և արդարադատությունը: Հին Չինաստանում և Հնդկաստանում այնպես էին. զարգացող երկիրը պետք է առաջնորդվի արդարադատությամբ: Հին փիլիսոփաների այս և այլ գաղափարները իրավունքի, ազատության, արդարության, մարդկային արժանապատվության, հումանիզմի վերաբերյալ հիմք են դարձել բոլոր հաջորդ սերունդների հումանիստական և մարդածին հայացքների, որոնք հիմք են հանդիսացել օրենքի գերակայության ժամանակակից հայեցակարգերի: Արդարադատության խնդիրը՝ որպես «ամեն ինչի պատճառը» ուսումնասիրությունը շարունակեց Պլատոնի ուսանող Արիստոտելը: Նրա կարծիքով, Սոլոնը ներկայացրեց ժողովրդական դատարան, որտեղ բոլորը կարող են դատավոր լինել: Ավելին, քաղաքացիները պետք է համարվեն նրանք, ովքեր «մասնակցում են դատին և ժողովրդական ժողովին: Քաղաքացու հասկացության նման սահմանումը լավագույնս համապատասխանում է բոլոր նրանց, ովքեր քաղաքացի են կոչվում» [4, էջ 67]: Արդարադատության խնդիրների հետագա խորը բացահայտումը Եվրոպայում իրականացվել է Նոր և Նորագույն ժամանակներում:

Հին և միջին դարերում ընդհանրապես հայտնի է, որ պետական կառավարման կարևորագույն ձևերից մեկը, որը կոչված է լուծել իրավունքի նորմերի հիման վրա սոցիալական կոնֆլիկտները, հանդիսանում է արդարադատությունը [11]: Միևնույն ժամանակ, դատարանը և արդարադատությունը, որպես իշխանության գործառույթ, զարգացման մեջ ունեցել են էական էվոլյուցիա:

Կոնֆլիկտների լուծման դատական եղանակի սոցիալական և տնտեսական արդյունավետությունը դարձել է մարդկության համար պարզ բավականին վաղ, իսկ դրա բացահայտումը աստիճանականորեն հանգեցրել է հասարակությունում հատուկ սոցիալական ենթահամակարգի ձևավորմանը՝ դատական իշխանությանը, որի հիմնական գործառույթը, համաձայն գերմանացի սոցիոլոգ և իրավաբան Ն. Լումանի, նրանում է, որ և՛ պետությունը, և՛ իրավահարաբերությունների սուբյեկտները, հիմնվելով հաղորդակցության համապատասխան ձևերի վրա, ունենան իրական հնարավորություն կանխարգելել լուծվեցների բռնությամբ լուծումները [7, էջեր 101-102; 12, էջեր 106-107]:

Դատարանի և արդարադատության ծագման, ինչպես նաև հետագա զարգացման վրա ազդող գործոնները և նախադրյալները բավականին շատ են: Հիմնականում դրանք կազմում են բարդ համախումբ, որի բաղկացուցիչներից յուրաքանչյուրը պայմանավորվել է կոնկրետ պատմական իրավիճակով:

Այդ ենթատեքստում հետաքրքիր են հետևյալ հարցերը. «Ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ» հանգամանքներում է տեղի ունեցել սոցիալական կոնֆլիկտների դատական (այլ խոսքերով, արդարադատության և կամ դատավարության) լուծման եղանակի առանձնացումը, մեկուսացումը, «ընձյուղումը» պետական գործունեության մնացյալ տեսակներին և, որպես անկախ ու ինքնուրույն դատական իշխանության կողմից իրականացվող վեճերի դատական լուծում նրա հարաբերակցում է պետության հիմնական գործառույթների հետ, ինչպիսիք են իրավասամրագրումը, իրավակիրառումը և իրավասապահովումը:

Քանի որ արդարադատությունը իսկապես պետական գործունեությանը բնորոշ հիմնական, կարևոր ուղղություններից մեկն է, ապա պետության և իրավունքի տեսության և պատմության ոլորտի բազմաթիվ հետազոտողներ, պատասխանելով առաջին հարցին, սովորաբար համաձայնվում են, որ արդարադատությունը հասակակից է ինչպես պետությանը, այնպես էլ իրավունքին:

Տվյալ տեսական եզրակացությունը հիմնավորվում է հետևյալ հիմքերով.

Առաջինը՝ արդարադատությունը սկզբունքորեն անհնարին է առանց որոշակի իրավական հենքի գոյության, քանի որ հենց դրա առկայությունն է դրդում կողմերին որոնել պաշտպանություն պետության մոտ, այդ թվում նաև դատարանում, որևէ կոնկրետ սուբյեկտիվ իրավունքի խախտման դեպքում: Իսկապես, եթե չկա իրավունք, անհրաժեշտ չէ նաև դատարանը, իսկ եթե չկա դատարան, ապա խախտվում է նաև իրավունքի բնականոն գործառնությունը: Այս պարագայում դատարանը կենդանություն է հաղորդում իրավունքին և հանդես է գալիս որպես «կենդանի իրավունք»:

Երկրորդը՝ ենթադրությունը, որ դատարանը հանդիսանում է իրավունքի և պետության հասակակիցը և հարակիցը բավականին հիմնորեն հաստատվել է մեզ հասած պատմական հուշարձաններով: Համաձայն որոնց, ցանկացած իրավական համակարգ անհնարին է առանց դատարանի, արդարադատություն իրականացնող ինստիտուտի, որը նախատեսված է խախտված իրավունքի և սոցիալական արդարության վերականգնման համար:

Անհրաժեշտ է նշել, որ դատական իշխանական հարաբերությունների ծագման վերաբերյալ նշված դիրքորոշումը հաճախ ենթարկվում է քննադատության: Կարելի է նույնիսկ ասել, որ գիտության մեջ ձևավորվել են ինչպես դատական իշխանության «երիտասարդացման», այնպես էլ «ծերացման» վերաբերյալ տեսակետներ:

Այսպես, որոշ գիտնականներ համարում են, որ դատական իշխանությունը համեմատաբար «երիտասարդ» ինստիտուտ է: Դատարանը և արդարադատությունը, ըստ նրանց իրավական և դատական կառուցման առավել ուշ դարաշրջանների ծնունդ են: Դրա հետ կապված որպես ինքնուրույն իշխանական ուժ՝ դատական իշխանության և արդարադատության ծագումը տվյալ տեսանկյունի շատագուցված թվագրվում են XVIII-XIX հարյուրամյակներով [10, էջ 315]:

Նման շփոթության պատճառը, ըստ երևույթին, նրանում է, որ վերո շարադրված տեսանկյան քննադատները, մոռանում են, որ դատական իշխանությունը պատմականորեն փոփոխական է: Դրա զարգացման պրոցեսում փոփոխվում են պետական իշխանությունում վերջինիս կազմակերպման տեսակները, փոփոխվում է նաև արդարադատության իրականացման տեսակը, այն ժամանակ, երբ նրա բազային, էական բնութագրիչները անփոփոխ են պետության և իշխանության գոյության ամբողջ ընթացքում:

Ինչ վերաբերվում է այն հեղինակներին, որոնք համարում են, որ հասարակությունում կոնֆլիկտային իրավիճակների դատական լուծման եղանակը առավել հին սոցիալական կատեգորիա է, քան պետությունը, ապա նրանց

դիրքորոշումը սովորաբար պատճառաբանվում է նրանով, որ վեճերի լուծումը հատուկ ստեղծված մարմնի միջոցով վարքագծի համընդհանուր կանոնների հիման վրա հանդիպում է այն ազգությունների մոտ, որոնք դեռևս ձեռք չեն բերել պետականություն:

Համաձայնել նման պատճառաբանությունների հետ չի կարելի, քանի որ տվյալ դեպքում «դատարան» հասկացության «ծերացման» կողմնակիցները դատավարության տակ ընկալում են ակնախարհի կողմից կոնֆլիկտների լուծման ցանկացած ձև, այլ ոչ կոնկրետ պետական մարմին, հատուկ լիազորված կոնֆլիկտների լուծման համար, բայց արդեն պետության անունից և նրա կողմից ընդունված և երաշխավորված իրավունքի նորմերի հիման վրա:

Հատկապես անհրաժեշտ է նշել Պ. Մ. Բարենբյույմի հիպոթեզը, ով զարգացնում է դատական իշխանության աստվածային բնույթի վերաբերյալ գաղափարը և հիմնավորում նրա վերաբերյալ կարծիքը, որ իշխանությունների բաժանման դոկտրինան հաշվարկում է երեք հազարամյակ, սկսած հին Կտակարանից մինչև մեր օրերը [5]: Իր հայացքների հիմնավորման համար հեղինակը բերում է փաստարկների մի ամբողջ շարք, այդ թվում վերցված Աստվածաշնչից, տարբեր գիտական տրակտատներից, որոնցում շարադրված են համապատասխան դրույթները և եզրակացությունները [6, էջեր 21-22]:

Իսրայելի Գերագույն Դատարանի նախկին նախագահի տեղակալ Մենախեմ Էլոնը նշում է, որ «դատարան, արդարադատություն, արդարություն գաղափարը կարմիր գծով անցնում են ամբողջ Թորով՝ հանդիսանալով հավատքի մաս» [8, էջեր 39-40]:

Ինչպես տեսնում ենք, խոսքը գնում է ընդամենը «իրավունք», «պետական դատարան» հասկացությունները «կրոնական բարոյականություն» և «կրոնական դատարան» հասկացություններով փոխարին ման մասին: Որևէ մեկը չի ժխտում կրոնի դերը սոցիալական վեճերի հարթեցման մեջ: Բացի դրանից, պատմության առանձին հատվածներում տվյալ հարթությունում այն բավականին հաջողությամբ մրցակցում էր պետության հետ:

Այս առումով, նշենք, որ Հին Հայաստանում արդարադատության գործառնությամբ իրականացնում էր Հայոց Կաթողիկոսը՝ որպես «Մեծն դատավարության գործակալության» ղեկավար [3, էջ 22], որի մասին մանրամասն կշարադրվի հաջորդ ենթագլխում:

Բոլոր դեպքերում, ակնառու է այլ բան առաջադրելով դատական իշխանությունը որպես միայն պետության տարր, չի կարելի փոխարինել հետազոտության մեկ առարկան մյուսով, տվյալ դեպքում՝ կրոնով:

Ընդունելով որպես հենման կետ, ըստ որի դատարանը հասակա կից և հարակից է և պետությանը, և՛ իրավունքին, ընդգծենք, որ չի կարելի սոցիալական կոնֆլիկտների լուծման դատական եղանակը, որը հայտնի է ցանկացած պետական ձևավորմանը, խառնել անկախ և ինքնուրույն դատական իշխանության գործառնության հետ:

### **Եզրակացություն**

Արդարադատության գաղափարը, ըստ էության, ձևավորվել և զարգացել է մարդկության գիտակցության և աշխարհընկալման հետ զուգընթաց, քանի որ տեղ մարդկային հանրույթ, այնտեղ վեճեր և շահերի բախում:

Դատարանը որպես արդարադատություն իրականացնող մարմին (հաստատություն) որոշ ժողովուրդների մոտ ավելի շուտ է ձևավորվել (օրինակ՝ հրեաների մոտ), քան թագավորական իշխանությունը: Պատմության զարգացմանը զուգահեռ ամրապնդվել և հեղինակություն է ձեռքբերել դատական իշխանությունը և իր հիմնական գործառնությունը լուծել է սոցիալ-իրավական վեճերը: Սկզբնական շրջանում արդարադատության մենաշնորհը գտնվում է կրոնական (քրմերի) դասի ձեռքում, սակայն թագավորական իշխանության ամրապնդմամբ և զարգացմամբ արդարադատությունը դարձավ պետության հիմնական գործառնություններից մեկը:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. **Ղազինյան Գ. Ս.** Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում: – Երևան, ԵՊՀ հրատ. 2001: – 432 էջ:
2. **Պլատոն** Երկեր չորս հատորով: Հատոր IV Պետություն: – Երևան, Անտարես, 2017: – 440 էջ:
3. **Սաֆարյան Գ.** Իրավունքի պատմության և տեսության հիմնահարցեր: – Երևան, 2010: – 696 էջ:
4. **Аристотель** Политика. – М., 2005. – 400 с.
5. **Баренбойм П.** 3000 лет доктрины раздзянення властей. Суд сьютера. – М., 2003. – 285 с.
6. **Баренбойм П.** Божественная природа судебной власти Российская юстиция. 1996. №1. – 23с.
7. **Лейст О. Э.** Сущность права. – М., 2008. – 452 с.
8. **Менаьем Элон.** Еврейское право. – М, 2002. – 609 с.
9. **Платон.** Соч. в 4 томах. Т. 3. Ч. 2. – М., 1971. – 654 с.
10. **Правосудие в современном мире.** Под ред. **В. М. Лебедова, Т. Я. Хабриевой.** – М., 2012. – 704 с.
11. **Судебная власть.** Под. ред. **И. Л. Петрухина.** – М., 2003. – 720 с.
12. **Хоффри Отфрид.** Политика, право, справедливость. Основоположения критической философии права и государства. – М., 1994. – 192 с.
13. **Цицерон Марк Тулий.** О государстве: законах, о природе богов / пер. с лат.– М., 1998: – 157 с.

*Տճանա/Հանձնվել է՝ 22.10.2024*

*Рецензирована/Գրախոսվել է՝ 18.11.2024*

*Принята/Ընդունվել է՝ 25.11.2024*